ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

«ՀՀՔԿԴ-ԲԸԱՇՁԲ-16/2» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումներ կատարելու բաց ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչական շենքի առանձին մասնաբաժնի ընթացիկ վերանորոգման և հարդարման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.08.2016թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ. Սահակյանը, Վ. Պետրոսյանը, Վ. Հարությունյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԲԸԱՇՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **<Էդմոն և Էդվարդ> ՍՊԸ (ՀՀ Լոռու մարզ, ք.Գուգարք 7 փող. 15 տուն)**
2. **<Նաիրիշին> ԲԲԸ (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, արտադրական հանգույց 18ա)**
3. **<Արտադրական բազա> ԲԲԸ (ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Խնձորուտ 2)**
4. **<Ագարակ> ԲԲԸ (ՀՀ Արագածոտնի մարզ գ.Փարպի)**
5. **<Գամշին> ՍՊԸ (ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Բաբաջանյան 1)**
6. **< Վարաքշին> ՍՊԸ (ՀՀ, ք. Հրազդան, Երևանյան փ. 44/33)**
7. **<Սասունասար> ՍՊԸ (ք. Երևան, Ազատության նրբ. 4շ, բն.75)**
8. **<Արման-Երեմ> ՍՊԸ (ք. Գավառ, Արծվաքար թաղ.)**
9. **< Վահրամ Առաջին > ՍՊԸ (ք. Աբովյան, Դարանի փ 5շ. 40 բն.)**
10. **<Աննա 80> ՍՊԸ (ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Դ. Դեմիրճյանի 20/23, ք. Երևան, Անդրանիկի 131/1)**
11. **<ՆԱՄԵՆԱՍԵԴ> ՍՊԸ (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Պ.Սևակի 1/51)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 09.08.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

Հանձնաժողովը որոշեց՝

Փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով նիստը հետաձգել 2 աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել 11.08.2016թ. ժամը 14:00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Սահակյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Վ. Հարությունյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

«ՀՀՔԿԴ-ԲԸԱՇՁԲ-16/2» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումներ կատարելու բաց ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչական շենքի առանձին մասնաբաժնի ընթացիկ վերանորոգման և հարդարման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.08.2016թ. ժամը 14^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ. Սահակյանը, Վ. Պետրոսյանը, Վ. Հարությունյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

1.1. Բոլոր մասնակիցների, բացառությամբ **<Արման-Երեմ> ՍՊԸ -ի, <ՆԱՄԵՆԱՍԵԴ> ՍՊԸ-ի** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:
1.2 **<Արման-Երեմ> ՍՊԸ-ի** կողմից armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:
1.3 **<ՆԱՄԵՆԱՍԵԴ> ՍՊԸ-ի** կողմից armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտում բացակայում է գնային առաջարկը. գնային առաջարկի փոխարեն կցված է Հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնագիրը:

2.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **<Գամշին> ՍՊԸ, <Նաիրիշին> ԲԲԸ, <Արտադրական բազա> ԲԲԸ, <Ագարակ> ԲԲԸ, <Վարաքշին> ՍՊԸ** կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 Մնացած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում կան թերություններ, մասնավորապես՝

3.2.1 **<Վահրամ Առաջին> ՍՊԸ** կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է հաշվարկային սխալ:

3.2.2 **<Սասունասար> ՍՊԸ** կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում գումարը թվերով և բառերով նշված չէ:

3.2.3 **<Արման-Երեմ> ՍՊԸ** կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում գումարը բառերով նշված չէ:

3.2.4 **<Էդմոն և Էդվարդ> ՍՊԸ** կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրում ընթացակարգի գնման ձևը սխալ է նշված:

3.2.5 **<Աննա 80> ՍՊԸ-ն** կողմից armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտում Հավելված 3.1 հանդիսացող մասնագիտական փորձառության մասին հայտարարությունում հստակ ներկայացված չէ այն պայմանագիրը (պայմանագրերը), որոնք պետք է ներկայացվեն որպես հայտարարությունը հիմնավորող փաստաթղթեր:

3.3 **<Վահրամ Առաջին> ՍՊԸ, <Սասունասար> ՍՊԸ, <Արման-Երեմ> ՍՊԸ, <Էդմոն և Էդվարդ> ՍՊԸ, <Աննա 80> ՍՊԸ** կողմից ներկայացված մնացած փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.11 թվականի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել 12.08.2016թ. ժամը 15:00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Սահակյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Վ. Հարությունյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

«ՀՀՔԿԴ-ԲԸԱՇՁԲ-16/2» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումներ կատարելու բաց ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչական շենքի առանձին մասնաբաժնի ընթացիկ վերանորոգման և հարդարման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.08.2016թ. ժամը 15^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ. Սահակյանը, Վ. Պետրոսյանը, Վ. Հարությունյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. **Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ.**

1. **<Արման-Երեմ> ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:
2. **<Աննա 80> ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է Հավելված N3.1, որը համապատասխանում է հրավերի պահանջներին:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչական շենքի առանձին մասնաբաժնի ընթացիկ վերանորոգման և հարդարման աշխատանքների

Նախահաշվային գինն է 12925138 ՀՀ դրամ:

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
1	<Էդմոն և Էդվարդ> ՍՊԸ*	8030000
2	<Աննա 80> ՍՊԸ	8078210
3	<Գամշին> ՍՊԸ	8078220
4	<Նաիրիշին> ԲԲԸ	8325000
5	<Արտադրական բազա> ԲԲԸ	8332500
6	<Ագարակ> ԲԲԸ	8333333
7	<Սասունասար> ՍՊԸ	9680000
8	< Վարաքշին> ՍՊԸ*	10000000
9	< Վահրամ Առաջին > ՍՊԸ	10237512
10	<Արման-Երեմ> ՍՊԸ	10416667

* Կազմակերպությունը հանդիսանում է ԱԱՀ չվճարող

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Հանձնաժողովը որոշեց՝

1.1 Մերժել **<ՆԱՄԵՆԱՍԵԴ> ՍՊԸ, <Վահրամ Առաջին> ՍՊԸ, <Սասունասար> ՍՊԸ, <Արման-Երեմ> ՍՊԸ, <Էդմոն և Էդվարդ> ՍՊԸ կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով** ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 44-րդ կետի 4-րդ ենթակետը և 45-րդ կետը:

1.2 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **<Աննա 80> ՍՊԸ -ին**:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած գինը ցածր են հայտով նախատեսված առավելագույն գնի 75տոկոսից:

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **<Գամշին> ՍՊԸ -ին**:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՖՆ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և լրացուցիչ հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Սահակյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Վ. Հարությունյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան